

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՎԱՐԴԻԹԵՐ ԻՎԱՆԻ ՀԱԿՈՔՅԱՆ**

**21-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԵՎ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ  
ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2022**

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան  
պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Գրիգորյան Քրիստինե Գևորգի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Բ.Գ.Դ., պրոֆ.՝ Գասպարյան Գայանե Ռաֆֆիի

Բ.Գ.Թ., դոց.՝ Վեյյան Կարեն Արմիկի

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. նոյեմբերի  
23-ին՝ ժամը 11-ին ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող  
009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝  
Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. հոկտեմբերի 13-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ Բ.Գ.Դ. պրոֆ.՝  Մուրադյան Գայանե

«Քաղաքավարություն» հասկացությունը համընդհանուր հաղորդակցական կարգ է, քանի որ դրա միջոցով է իրականացվում պատշաճ ու բարեկիրթ մարդկային հաղորդակցական փոխազդեցությունը հաղորդակցման նորմերի և հաղորդակցական ռազմավարությունների միջոցով:

Լեզուն արտացոլում է քաղաքավարության կանոնները, հաղորդակցական կաղապարներն ու ռազմավարությունները՝ խթանելով ներդաշնակ, արդյունավետ հաղորդակցական փոխներգործությանը: Այս առումով, առանցքային է ներիմաստի ուսումնասիրությունը, որի հիմքում է հաղորդակցական իրադրությունը:

Ներիմաստներից մեկն է քաղաքավարությունը, որն, անշուշտ, կարևոր նշանակություն ունի մարդկային փոխհարաբերություններում՝ կարգավորելով լեզվական և արտալեզվական գործոնների առանձնահատկությունները: Այսինքն՝ իրականանում է լեզվագործաբանական գործառույթը՝ արտացոլելով լեզվական միավորների և հաղորդակցական տվյալ իրադրության փոխհարաբերությունները:

Անշուշտ, լեզվագործաբանության կենտրոնում է մարդկային խոսքային գործունեությունը, կոնկրետ հաղորդակցական իրավիճակում խոսող-խոսակցի միջև, որի ընթացքում, շատ հաճախ, խոսողի կողմից արտաբերված ասույթից փոխանցվում է ավելին, քան արտաբերվում է: Այսպիսով, առաջ է գալիս «իմպլիկատորա» եզրաբառը՝ գործաբանության առանցքային և համեմատաբար նոր հասկացություններից մեկը՝ առաջադրված բրիտանացի լեզվաբան Գրայսի կողմից:<sup>1</sup>

Որպես առանցքային նշանակության հասկացություն սոցիալական փոխազդեցություններում՝ «քաղաքավարություն» և «իմպլիկատորա» կապի ուսումնասիրությունը և բացահայտումը կարևոր է և առանցքային: Սույն ատենախոսության մեջ ուսումնասիրվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում գործաբանության առանցքային հասկացություններից մեկի՝ քաղա-

---

<sup>1</sup> Grice P. Logic and Conversation. Williams James lectures. Cambridge, MA: Harvard University, 1967.

քավարության իմպլիկատորայի, դրա տեսակների, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթի առկայացման առանձնահատկությունները՝ լեզվագործաբանության լույսի ներքո:

Ատենախոսության մեջ բացահայտվում է քաղաքավարության իմպլիկատորայի և դրա տեսակների՝ *խրախուսող քաղաքավարության* /*enhancement politeness*<sup>2</sup>, *փոխհատուցող քաղաքավարության* /*compensatory politeness*/, *դիմացինի արժանիքները գնահատելու քաղաքավարության* /*demeanour politeness*/, *պայմանական քաղաքավարության* /*provisional politeness*<sup>3</sup>, *բացասական քաղաքավարության* /*negative politeness*<sup>4</sup> առկայացման լեզվագործաբանական առանձնահատկությունները (պաշտոնական համատեքստ, ոչ պաշտոնական համատեքստ, լեզվական միջոցների գործաբանական առանձնահատկությունները, քաղաքավարության բարձր աստիճանի դրսևորումները, պարտադրանքի նվազեցումը, անուղղակիությունը, պաշտոնական հարաբերությունները, հարցազրուցավար-հարցվող սոցիալական մեծ հեռավորությունը, մտերմիկ հարաբերությունները, սոցիալական փոքր հեռավորությունը, խոսքի կառուցման ուղղակի դրսևորումները, և այլն) պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում:

Անշուշտ, քննվում է նաև հարցազրույցի էությունը, տեսակները, էական առանձնահատկությունները (*հարցազրուցավարի ներգրավվածության աստիճան, հանդիսավորություն, շնորհակալական խոսքի առկայություն, սահմանափակ ժամանակ, հարցերի տեսակներ* և այլն)<sup>5</sup> համակարգելով քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների և քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման չափորոշիչները:

Սույն ատենախոսության մեջ վերլուծության են ենթարկվել ԱՄՆ քառասունչորսերորդ նախագահ Բարաք Օբամայի՝ որպես ազդեցիկ

---

<sup>2</sup> Leech G. Principles of Pragmatics. London: Longman, 1983.

<sup>3</sup> Haugh M. The Importance of 'Place' in Japanese Politeness: Implications for Cross-Cultural and Intercultural Analyses // *Intercultural Pragmatics*, 2 (1), 2005.

<sup>4</sup> Brown P., Levinson S. Politeness. Some Universals in Language Usage. Cambridge: Cambridge University Press, 1987.

հոետորի մասնակցությամբ հարցազրույցները, որոնք առանձնանում են արտահայտչականությամբ, հուզականությամբ, լեզվական միջոցների լայն կիրառությամբ, և այլն:

Քաղաքավարության՝ որպես համընդհանուր սկզբունքի կարևորությունը սոցիալական փոխազդեցություններում, դրա բացահայտումը և վերլուծությունը պաշտոնական և մտերմիկ համատեքստում, քաղաքավարության և իմպլիկատորայի կապի մասին դեռևս անավարտ ուսումնասիրությունները **արդիական** են և հնարավորություն են տալիս մեկնաբանելու և վերլուծելու քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների առկայացման առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում՝ լեզվագործաբանական քննությամբ:

Սույն աշխատության **նպատակն** է բացահայտել քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման առկայացման առանձնահատկությունները պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում՝ լեզվագործաբանության դիրքերից:

Այս նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

1. ուսումնասիրել հարցազրույցի էությունը, հարցազրույցի տեսակները և դրանց բնորոշ գործաբանական առանձնահատկությունները (հարցերի տեսակներ, հարցազրուցավարի դերն ու կարգավիճակը, շնորհակալական խոսքի առկայություն, հարցազրույցի հանդիսավոր բնույթ և այլն),
2. իրականացնել գործաբանությանը և լեզվագործաբանությանը նվիրված ուսումնասիրություն, ուսումնասիրել իմպլիկատորայի՝ որպես գործաբանական երևույթի հասկացության էությունը, դրա կապը քաղաքավարության իմպլիկատորայի հետ, քաղաքավարության իմպլիկատորայի առկայացումը (ասույթներից, լեզվական միավորներից), կատարել քաղաքավարության սկզբունքի մոտեցումների վերլուծություն (պաշտոնական համատեքստ, քաղաքավարության բարձր աստիճան, սոցիալական հեռավորություն, պարտադրանքի նվազեցում և այլն),

3. ուսումնասիրել և բացահայտել քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների առկայացման օրինաչափությունները, ինչպես նաև քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը,
4. վեր հանել և վերլուծել պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման առկայացման առանձնահատկությունները գործաբանական և լեզվական ներուժի իրացմամբ, իրականացնել լեզվագործաբանական համեմատական վերլուծություն նշյալ համատեքստերում:

Սույն աշխատանքում ուսումնասիրությունը կատարվել է համատեքստային-իրադրային, զուգադրական և նկարագրական, լեզվագործաբանական վերլուծության **մեթոդների** համադրությամբ, որոնք թույլ են տալիս հաղորդակցական տարբեր իրադրություններում ընդգրկված քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման առկայացումը պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում հետազոտել լեզվագործաբանական ներուժի իրացմամբ:

Աշխատանքի **նորույթն** այն է, որ առաջին անգամ վերլուծական համեմատական հետազոտությամբ լեզվագործաբանական քննության միջոցով փորձ է արվում քննության առնել և վերլուծել «քաղաքավարություն» և «իմպլիկատորա» հասկացությունների կապի, քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների առկայացման առանձնահատկությունները, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում:

**Տեսական առումով** սույն աշխատության հետազոտության արդյունքները կարող են գործածվել գործաբանությանը, լեզվագործաբանությանը, սոցիոլոգիային նվիրված ուսումնասիրություններում:

Ուսումնասիրության արդյունքներն ունեն որոշակի **կիրառական արժեք** և կարող են ներդրվել լեզվագործաբանության սեմինարներում, քերականական և բառագիտական դասընթացներում:

Հետազոտված **փաստական նյութը** քաղված է ամերիկյան համացանցային մամուլում հրատարակված հարցազրույցներից: Սույն

աշխատության մեջ վերլուծության են ենթարկվել տասնյակ հարցազրույցներ, որոնցից նպատակահարմար ենք գտել ատենախոսության մեջ որպես վերլուծական նյութ ներկայացնել չորս պաշտոնական և չորս ոչ պաշտոնական հարցազրույցներ՝ ելնելով ատենախոսության առջև դրված նպատակներից և խնդիրներից, էջաքանակի չափանիշներից, ինչպես նաև մամուլում դրանց առավել ճանաչված լինելու հանգամանքից:

Աշխատանքը բաղկացած է *ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:*

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերը, որոշարկվում են նպատակն ու խնդիրները, հիմնավորվում են թեմայի ընտրությունը, մեթոդները, արդիականությունն ու նորոյթը, կատարված հետազոտության տեսական և գործնական արժեքը:

Աշխատանքի **առաջին՝ «Լրագրային հարցազրույցների առանձնահատկությունները»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից և նվիրված է հարցազրույց հասկացության, դրա էության ուսումնասիրությանը: Հարցազրույցի էության բացահայտման մանրամասն նկարագիր է տրվում գլխի առաջին՝ **«Հարցազրույցի էությունը»** ենթագլխում: Այստեղ քննության է առնվում հարցազրույցի էությունը, հարցազրույցի տեսակները, դրան բնորոշ հարցերի տեսակները և գործաբանական այլ առանձնահատկություններ: Ըստ Հոլստեյնի և Գուբրիումի՝ հարցազրույցները ներկայացնում են մարդկանց փորձը, ներքին ընկալումները, նրանց վերաբերմունքը իրականության հանդեպ:<sup>5</sup>

Գլխի երկրորդ՝ **«Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների առանձնահատկությունները»** ենթագլխում մանրամասն անդրադարձ է արվում հարցազրույցի տեսակներին, դրանց առանցքային գործաբանական առանձնահատկություններին. պաշտոնական, մտերմիկ համատեքստ, դրան բնորոշ հարցերի տեսակները, հարցազրույցավարի դեր և ներգրավվածության աստիճան, ասհիմնափանակ և անասհիմնափակ ժամանակ, շնորհակալական

---

<sup>5</sup> Holstein J. A. and Gubrium J. F. *The Active Interview // Qualitative Research Methods*, Vol. 37, CA: Sage, Thousand Oaks, 1995.

խոսքի առկայություն և բացակայություն, և այլն: Ոչ պաշտոնական հարցազրույցները նման են «հավասարների» միջև զրույցի՝ ի տարբերություն պաշտոնական հարց-պատասխան փոխանակման:<sup>6</sup>

Գլխի երրորդ՝ **«Հարցերի տեսակները»** ենթագլխում առավել մանրամասն ուսումնասիրվում և ներկայացվում են հարցերի տեսակները և դրանց էությունը:

Բաց տեսակի հարցերը համարվում են ամենաարդյունավետ գործիքը հետաքրքիր և ոչնչով չսահմանափակված պատասխաններ ստանալու համար, և հնարավորություն են ընձեռում և՛ զրուցակցին, և՛ լրագրողին մտածել: Ենթադրվում է, որ փակ հարցերի պատասխանները կանխատեսելի են, սակայն լինում են դեպքեր, երբ տալով «այո» կամ «ոչ» պատասխանը, զրուցակիցը սկսում է հիմնավորումներ տալ, քանի որ հարցվողներից շատերը ցանկանում են քաղաքավարի տպավորություն թողնել հարցազրուցավարի վրա, այդ իսկ պատճառով «օգնում են» վերջինիս՝ լրացնելով իրենց կարճ պատասխանը հետագա հիմնավորումներով:

Աշխատանքի **երկրորդ գլուխը** վերնագրված է **«Քաղաքավարության իմպլիկատորայի և դրա տեսակների դրսևորման օրինաչափությունները»**: Գլխի առաջին՝ **«Իմպլիկատորան՝ որպես գործաբանական երևույթ»** ենթագլխում մանրամասն քննության է առնվում լեզվագործաբանության ուսումնասիրության առարկան, իմպլիկատորայի՝ որպես առանցքային գործաբանական երևույթի ուսումնասիրությունը, իմպլիկատորաների առկայացումը լեզվական միավորներից և ասույթներից և դրանց կապը տվյալ հաղորդակցական իրադրության, համագործակցային սկզբունքների հետ: Համաձայն Գրայսի՝ իմպլիկատորան ասույթի ենթադրվող իմաստն է, այն կարող է նախադասության իմաստի մաս կազմել կամ հետևել այն համատեքստից, որում առկայացվում է: Մեր կարծիքով, իմպլիկատորաներ պարունակում են նաև ոճական հնարները՝ նույնասկիզբ, վերջույթ, բազմաշաղկապություն, թվարկում, փոխակերպում, հակադրություն, համեմատություն, սպասում, զգացմունքային լռություն, փոխաբերություն. վերջիններս, սակայն, հետաքրքիր նյութ կարող են դառնալ հետագա ուսումնասիրությունների համար ու թեև

---

<sup>6</sup> Denzin N. K. The Research Act in Sociology, Chicago, IL: Aldine, 1970.



դուրս են ատենախոսության հետազոտության շրջանակներից, այնուամենայնիվ իրենց արտացոլումն են գտել մեր հոդվածներից երկուսում, որոնք վերաբերում են ԱՄՆ քառասունչորսերորդ նախագահ Բարաք Օբամայի, որի խոսքը, ինչպես գիտենք, առանձնանում է մեծ արտահայտչականությամբ և հուզականությամբ, մասնակցությամբ պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների քննությամբ: Չնայած մեր ուսումնասիրության կենտրոնում է իմպլիկատորայի և քաղաքավարության կապի քննությունը, ինչպես նաև իմպլիկատորաների բացահատումը, ընկալումը ու համատեղ կառուցումը, որոնք հիմք են դառնում քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների և համատեղ կառուցման համար, այնուամենայնիվ կարևոր ենք համարում շեշտել, որ, ուսումնասիրելով «իմպլիկատորա» հասկացությունը, գտնում ենք, որ այն համատեքստից որոշակի աստիճանի կախվածություն ունի՝ անկախ առկա դասակարգումներից:

Հայտնի է, որ «իմպլիկատորայի» և «քաղաքավարության» կապի մասին ուսումնասիրությունները դեռևս անավարտ և վիճարկելի փուլում են. գլխի երկրորդ՝ **«Քաղաքավարության իմպլիկատորա հասկացության էությունը»** ենթագլխում փորձ է արվում քննության առնել քաղաքավարության և իմպլիկատորայի կապը, հիմնավորել «քաղաքավարության իմպլիկատորա» և «քաղաքավարություն» եզրաբառերի էությունը: Այդուհանդերձ, մեր աշխատանքում մենք կկիրառենք «քաղաքավարության իմպլիկատորա» եզրաբառը: Քաղաքավարության իմպլիկատորայի առկայացման մասին դրույթները բազմաթիվ են. Կալիան<sup>7</sup> պնդում է, որ քաղաքավարությունն ի հայտ է գալիս իմպլիկատորաների տեսքով, քաղաքավարության իմպլիկատորան առաջանում է մասնակցի կողմից արված ակնարկի արդյունքում՝ ուղղակի կերպով արտահայտելու փոխարեն: Անուղղակիությունը քաղաքավարության ձև է: Քաղաքավարության աստիճանն արտացոլում է մասնակիցների միջև առկա սոցիալական հարաբերությունները, սոցիալական հեռավորությունը և պարտադրանքի աստիճանը:<sup>8</sup>

---

<sup>7</sup> Kallia A. Linguistic politeness: The Implicature Approach // *Multilingua*, 23 (1-2), Berlin/New York: Walter de Gruyter, 2004.

<sup>8</sup> Yerzncykyan Ye., Sujyan S. Pragmatic Competence: Indirectness and Politeness. LATEUM- 2005 Proceedings of the 8<sup>th</sup> Internatinal Conference //

Նկատի ունենալով վերոբերյալը՝ հարկ ենք համարում նշել, որ քաղաքավարության իմպլիկատորան ձևավորվում է իմպլիկատորանների տեսքով հաղորդակցվող մասնակցի կողմից արված ակնարկի արդյունքում:

Գլխի երրորդ՝ «**Քաղաքավարության իմպլիկատորանի համատեղ կառուցման բնույթը և դրա տեսակների առկայացումը հաղորդակցման մեջ**» ենթագլխում մանրամասն ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում քաղաքավարության իմպլիկատորանի, դրա տեսակների (*փոխհատուցող քաղաքավարություն (compensatory politeness)*<sup>9</sup> դիմացինի արժանիքները գնահատելու քաղաքավարություն (*demeanour politeness*), խրախուսող քաղաքավարություն (*enhancement politeness*)<sup>10</sup>, բացասական քաղաքավարություն (*negative politeness*)<sup>11</sup> պայմանական քաղաքավարություն (*provisional politeness*)<sup>12</sup> առկայացումը, ինչպես նաև քաղաքավարության իմպլիկատորանի համատեղ կառուցման բնույթը:<sup>13</sup>

Կարևոր ենք համարում նշել, որ քաղաքավարության իմպլիկատորան, դրա համատեղ կառուցման բնույթը, քաղաքավարության իմպլիկատորանի տեսակների առկայացումը, որոնք անշուշտ, արտացոլում են լեզվական և արտալեզվական գործոններ, ի հայտ են գալիս իմպլիկատորանների ընկալման, բացահայտման, համատեղ

---

*ELT as Sustainable Development: Secondary and Tertiary Education*, Moscow: BHU, 2007.

<sup>9</sup> Haugh M., Hinze C. A Metalinguistic Approach to Deconstructing the Concepts of 'Face' and 'Politeness' in Chinese, English and Japanese // *Journal of Pragmatics*, Vol. 35, Berlin/New York: Walter de Gruyter, 2003.

<sup>10</sup> Leech G. *Principles of Pragmatics*. London: Longman, 1983.

<sup>11</sup> Brown P., Levinson S. *Politeness. Some Universals in Language Usage*. Cambridge: Cambridge University Press, 1987.

<sup>12</sup> Haugh M. The Importance of 'Place' in Japanese Politeness: Implications for Cross-Cultural and Intercultural Analyses, // *Intercultural Pragmatics*, 2 (1), 2005.

<sup>13</sup> Arundale R. An Alternative Model and Ideology of Communication for an Alternative to Politeness Theory // *Pragmatics*, 9 (1), 1999.

կառուցման արդյունքում մասնակիցների ակտիվ խոսքի փոխանակման ընթացքում:

Ատենախոսության երրորդ գլխի՝ «**Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական վերլուծություն**» վերլուծական նյութը քաղված է ամերիկյան համացանցային մամուլի հարցազրույցներից:

Պաշտոնական, ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական վերլուծության համար հիմք են ծառայել ամերիկյան համացանցային մամուլից քաղված հարցազրույցները, ոչ պաշտոնական հարցազրույցներից՝ ամերիկացի հաղորդավար Օփրա Ուինֆրիի, «Թայմի» թղթակից, Սպիտակ տան նախկին թղթակից Մայա Ռոդանի, քաղաքական վերլուծաբան, Օբամայի քարոզարշավների գլխավոր ռազմավար, նախագահի գլխավոր խորհրդական Դեյվիդ Աքսելրոդի, ամերիկացի կատակերգակ, հեռուստահաղորդավար, ռեժիսոր Սթիվ Հարփի հարցազրույցները (Oprah.com, The Axe Files-CNN, Time), պաշտոնական հարցազրույցներից՝ հյուսիսամերիկյան խմբագիր Ջոն Սոփելի, ամերիկացի լիբանանյան լրագրող Հիշամ Մելիեմի, «NPR»-ի թղթակից Սթիվ Ինսկիպի, CNBC թղթակից Ջոն Հարվուդի հարցազրույցները ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ (NPR, CNBC, NBCNEWS, BBC news, US &Canada):

Հարկ է նշել, որ վերլուծության են ենթարկվել Օբամայի 8 հարցազրույցները. մեկը՝ Իլլինոյսի սենատի պաշտոնավարման ժամանակ տրված մեկ ոչ պաշտոնական հարցազրույցն է, իսկ մյուս՝ 7 հարցազրույցները՝ պաշտոնական և ոչ պաշտոնական, տեղի են ունեցել Բարաք Օբամայի՝ ԱՄՆ նախագահի պաշտոնավարման տարիներին:

Պաշտոնական և ոչ պաշտոնական համատեքստերում լեզվագործաբանական վերլուծության հիմքում են սոցիալական դիրքերի և կարգավիճակի տարբերությունները, մասնավորապես՝ սենատի պաշտոնում՝ Օբամայի, մյուս հարցազրույցներում՝ ԱՄՆ նախագահի դիրք զբաղեցնող Բարաք Օբամայի և հարցազրուցավարի միջև: Ոչ պաշտոնական հարցազրույցները արտացոլում են հարցազրուցավար-հարցվող մտերմիկ հարաբերությունները, սոցիալական փոքր հեռավորությունը, պաշտոնականը՝ պաշտոնական հարաբերությունները և սոցիալական մեծ հեռավորությունը՝ որոշարկելով համատեքստը, քաղաքավարության բարձր աստիճանը, լեզվական միջոցների ընտրությունը և դրանց գործաբանական առանձնահատկությունները,

քաղաքավարության իմպլիկատորայի և դրա տեսակների, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթի առկայացման չափորոշիչները և արտալեզվական մի շարք գործոններ:

**Գլխի առաջին՝** «Պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական վերլուծություն» **ենթազվխում փորձ է արվում կատարել մանրագին լեզվագործաբանական վերլուծություն մեր աշխատանքում տեղ գտած չորս պաշտոնական հարցազրույցները՝** «Հյուսիսամերիկացի խմբագիր Ջոն Սոփելի հարցազրույցը ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի հետ», «Ամերիկայիբանանցի լրագրող Հիշամ Մեհեմի հարցազրույցը 44-րդ նախագահ Բարաք Օբամայի հետ», «Ամերիկացի լրագրող, «CNBC» թղթակից Ջոն Հարվուդի հարցազրույցը ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի հետ», «NPR»-ի թղթակից Սթիվ Ինսկիպի հարցազրույցը 44-րդ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ»:

Կատարված լեզվագործաբանական վերլուծական աշխատանքը փաստում է, որ պաշտոնական հարցազրույցները արտացոլում են խոսող-խոսակցի միջև առկա սոցիալական մեծ հեռավորությունը և պաշտոնական հարաբերությունները, որոնք ենթադրում են քաղաքավարության բարձր աստիճանի դրսևորում և պարտադրանքի նվազեցում: Այս առումով, ակնհայտ են խոսքի անուղղակի դրսևորումները, ինչպես նաև վերոնշյալ համատեքստի արտալեզվական գործոնները՝ կառուցվածքայնություն, սահմանափակ ժամանակ, պաշտոնական շնորհակալական խոսք, փակ հարցերի տեսակներ և այլն: Պաշտոնական հարցազրույցների նյութի հիման վրա կատարված ուսումնասիրություններն արտացոլում են խոսքի կառուցման անուղղակի դրսևորումները, լեզվական միջոցների գործաբանական առանձնահատկությունները, որոնք դուրս են բերվում ասույթներից կամ դրա մաս կազմող բառային, շարահյուսական առանձին միջոցներից, քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների, առկայացման առանձնահատկությունները: Սույն հարցազրույցներում ակնհայտ է նաև քաղաքավարության բարձր աստիճանը, քաղաքավարության իմպլիկատորայի առկայացումը հարցազրուցավար-հարցվող հաղորդակցական իրադրության ընթացքում, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը պաշտոնական համատեքստում, որը նպաստում է արդյունավետ հաղորդակցությանը:

Գլխի երկրորդ՝ «Ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական վերլուծություն» ենթագլխում ներկայացվում են չորս ոչ պաշտոնական հարցազրույցները. «Օփրա Ուինֆրիի հարցազրույցը Իլլինոյսի սենատ Բարաք Օբամայի հետ», «Time»-ի թղթակից, Սպիտակ Տան նախկին թղթակից Մայա Ռոդանի հարցազրույցը ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի և ամերիկացի բալետի պարուհի Միսթի Քոուփլենդի հետ», ԱՄՆ 44-րդ նախագահի քաղաքական վերլուծաբան, Օբամայի քարոզարշավների գլխավոր ռազմավար, նախագահի գլխավոր խորհրդական Դեյվիդ Աքսելրոդի հարցազրույցը ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի հետ. «The Axe Files», «Ամերիկացի կոմիկ, հեռուստահաղորդավար, ռեժիսոր Սթիվ Հարվիի հարցազրույցը ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի հետ»:

Հարցազրույցների ոչ պաշտոնական համատեքստին բնորոշ են լեզվագործաբանական մի շարք էական առանձնահատկություններ՝ հաղորդակցվող մասնակիցների սոցիալական փոքր հեռավորություն, ուղղակի և անկաշկանդ վարքագիծ, խոսքային ուղղակի դրսևորումները, հարցազրույցի ազատ բնույթ, շնորհակալական խոսքի բացակայությունը, խոսքի կառուցման ուղղակի դրսևորումներ, անսահմանափակ ժամանակ, հարցազրուցավարի անկաշկանդ և ամբողջական ներգրավվածություն, բաց հարցերի կիրառությունը, քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների, համատեղ կառուցման բնույթի առկայացումը լեզվական միջոցների հաշվառմամբ:

Գլխի երրորդ՝ «Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները» ենթագլխում փորձ է արվում մանրազնին ներկայացնել պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում ամփոփված դրույթները, վերոնշյալ համատեքստերի լեզվական (բառային, քերականական, շարահյուսական) միջոցների գործաբանական առանձնահատկությունները, արտալեզվական գործոնները, քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների առկայացման առանձնահատկությունները, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը պաշտոնական և ոչ պաշտոնական համատեքստերում՝ համեմատական եզրահանգումներով:

Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների հիման վրա մեր կողմից կատարված լեզվագործաբանական համեմատական վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները:

1. «Քաղաքավարություն» և «Իմպլիկատորա» հասկացությունները փոխկապակցված են, քանի որ քաղաքավարությունն առկայացվում է մասնակցի կողմից արված ակնարկի արդյունքում՝ իմպլիկատորաների տեսքով:
2. Քաղաքավարության իմպլիկատորայի, դրա համատեղ կառուցման, քաղաքավարության իմպլիկատորայի տեսակների առկայացման առանձնահատկությունները պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում արտացոլում են լեզվագործաբանական մի շարք առանձնահատկություններ՝ սոցիալական հեռավորություն, քաղաքավարության բարձր աստիճան (անուղղակի խոսքային դրսևորումներ), պարտադրանքի նվազեցում, պաշտոնական համատեքստ, մտերմիկ համատեքստ, խոսքի կառուցման ուղղակի դրսևորումներ, անուղղակի բառային միավորներ (hedges), բառային, քերականական, շարահյուսական միջոցների գործաբանական առանձնահատկություններ, իմպլիկատորաների բացահայտում, ընկալում և համատեղ կառուցում:
3. Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներին բնորոշ արտալեզվական գործոններից են սահմանափակ կամ անսահմանափակ ժամանակը, շնորհակալական խոսքի առկայությունը կամ բացակայությունը, հանդիսավոր կամ ազատ բնույթը, կարևոր, ազատ թեմաների քննարկումը, փակ կամ բաց հարցերի կիրառությունը, հարցազրուցավարի ներգրավվածության աստիճանը (չեզոք վարքագիծ, անկաշկանդ և ամբողջական ներգրավվածություն):
4. *ա) Քաղաքավարության իմպլիկատորան* պաշտոնական համատեքստում առավելապես առկայացվում է (ասույթներից, լեզվական միավորներից) հարցազրուցավար-հարցվող խոսքային փոխանակման ընթացքում, որն արտացոլում է կողմերի պաշտոնական հարաբերությունները և սոցիալական մեծ հեռավորությունը, մինչդեռ ոչ պաշտոնական համատեքստում

քաղաքավարության իմպլիկատորան ձևավորվում է հաղորդակցական ընդհանուր իրադրության ժամանակ:

բ) *Քաղաքավարության իմպլիկատորայի համարեղ կառուցումը /co-constitution of politeness implicature/* պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում (պաշտոնական համատեքստ, մտերմիկ համատեքստ) էական նշանակություն ունի խոսքային հաղորդակցության արդյունավետության համար, որն ի հայտ է գալիս մասնակիցների խոսքային ակտիվ փոխազդեցության ընթացքում՝ իմպլիկատորանների ընկալման և համատեղ կառուցման արդյունքում (ասույթներից, լեզվական միջոցներից):

5. ա) *Քաղաքավարության իմպլիկատորայի տեսակներից է բացասական քաղաքավարությունը /negative politeness/, որը բնորոշ է հարցազրույցների պաշտոնական համատեքստին, քանի որ պաշտոնական հարաբերություններն արտացոլում են պարտադրանքի աստիճանի ակնհայտ նվազեցումը և քաղաքավարության բարձր աստիճանը՝ անուղղակի բառային միջոցների, խոսքի անուղղակի դրսևորումների միջոցով:*

բ) *Խրախուսող քաղաքավարությունը /enhancement politeness/* հարգանքի դրսևորման առկայացումն է պաշտոնական հարցազրույցներում իմպլիկատորայի տեսքով, որը հետևում է ասույթից հարցազրուցավար-հարցվող համատեքստում (անձնական բնույթի հաճոյախոսությունների, հիացմունքի խոսքերի բացառում), արտացոլում է կողմերի միջև առկա սոցիալական մեծ հեռավորությունը և պաշտոնական հարաբերությունները:

6. ա) Ոչ պաշտոնական հարցազրույցներին բնորոշ է *քաղաքավարության իմպլիկատորայի տեսակներից պայմանական քաղաքավարությունը /provisional politeness/* (երբ խոսողը դիմացինին ընդունում է որպես իրեն հավասար՝ կիսելով վերջինիս փորձը), որի դեպքում հարցազրուցավարից պահանջվում է ամբողջապես ներգրավվել զրույցի ընթացքին:

բ) *Խրախուսող քաղաքավարության /enhancement politeness/* առկայացումը հարցազրուցավար-հարցվող համատեքստում ուղղակի կերպով (անձնական բնույթի հաճոյախոսություններ, հիացմունքի խոսքեր) ենթադրում է կողմերի միջև առկա սոցիալական փոքր հեռավորությունը և մտերմիկ հարաբերությունները:

7. ա) Քաղաքավարության իմպլիկատորայի մյուս տեսակներից դիմացինի արժանիքները գնահատելու քաղաքավարությունն /*demeanour politeness*/ առկայացվում է պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում (ասույթներից կամ լեզվական միջոցներից), երբ հարցվողը ցույց է տալիս, որ մեծ կարծիքի չէ իր մասին՝ չնայած վերջինիս զբաղեցրած սոցիալական բարձր կարգավիճակին: Բ) Փոխհատուցող քաղաքավարությունն /*compensatory politeness*/ առկայացվում է պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում (ասույթներից կամ լեզվական միջոցներից), երբ խոսողը ցույց է տալիս, որ վատ կարծիքի չէ դիմացինի մասին՝ չնայած վերջինիս կողմից ցուցաբերած անհամարժեք վարքագծի: Այդուհանդերձ, փոխհատուցող քաղաքավարության առկայացումն առավել բնորոշ է պաշտոնական համատեքստին՝ պաշտոնական թեմաների քննարկմամբ պայմանավորված:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. General characteristics and types of research interviews // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1 (34), Երևան, «Լինգվա» հրատ., 2015, էջ 198-205:
2. Linguo-pragmatic peculiarities of unstructured interviews, (the analysis of Oprah's interview with Barack Obama) // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1 (38), Երևան, «Լինգվա» հրատ., 2016, էջ 300-310:
3. Linguo-pragmatic analysis of semi-structured interviews (on the material of president Obama's interview by Hisham Melhem) // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1 (42), Երևան, «Լինգվա» հրատ., 2017, էջ 348-356:
4. On the notion of politeness implicature and its reflection in informal interviews // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 2 (23), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 12-21:



5. Քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթի և պաշտոնական հարցազրույցներում դրա դրսևորումների շուրջ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», 1 (24), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 97-107:
6. Պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները // Կանթեղ, 1 (74), Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, «Ասողիկ» հրատ., 2018, էջ 69-75:

## ВАРДИТЕР АКОПЯН

### ЛИНГВОПРАГМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОФИЦИАЛЬНЫХ И НЕОФИЦИАЛЬНЫХ ИНТЕРВЬЮ В АМЕРИКАНСКОЙ ПРЕССЕ 21 ВЕКА

#### РЕЗЮМЕ

**Объектом** данного исследования являются лингвопрагматические особенности формальных и неформальных интервью в американской прессе 21 века.

Исследование посвящено одному из ключевых понятий в прагматике - импликатуре вежливости, а также ее типам, совместному конструированию импликатуры вежливости, особенностям способов их проявления в формальных и неформальных интервью в свете лингвопрагматики. В исследовании проанализированы интервью с участием сорок четвертого президента США Барака Обамы, выступления которого отличаются выразительностью и широким использованием языковых средств.

Данное исследование изучает проявление лингвопрагматических особенностей (формальный контекст, неформальный контекст, прагматические особенности языковых средств, высокая степень вежливости, косвенность, минимизация навязывания, формальные отношения, большая социальная дистанция между интервьюером и интервьюируемым, близкие отношения, малая социальная дистанция, прямые словесные проявления и т. д.) в официальных и неофициальных интервью, импликатуры вежливости, ее видов (обнадеживающая вежливость, компенсационная вежливость, вежливость манеры поведения, условная вежливость, отрицательная вежливость), совместного конструирования импликатуры вежливости.

**Цель** данного исследования - выявить особенности применения импликатуры вежливости, ее типов и совместного конструирования импликатуры вежливости в формальных и неформальных интервью с учетом лингвистических и прагматических факторов.

В соответствии с целью исследования были поставлены следующие задачи:

1. исследовать суть интервью, типы интервью, его прагматические особенности (типы вопросов, роль и статус интервьюера, благодарность, торжественность интервью и т. д.),
2. провести прагматическое и лингвопрагматическое исследование, изучить сущность импликатуры как прагматического понятия, ее пересечение с импликатурой вежливости, проявление импликатуры вежливости (языковые средства), а также проанализировать принципы подходов к вежливости (формальный контекст, высокая степень вежливости, социальная дистанция, минимизация навязывания и т. д.),
3. выявить особенности проявления импликатуры вежливости, ее типы и сущность совместного конструирования импликатуры вежливости.,
4. Сопоставить особенности проявления импликатуры вежливости, ее типы, формирования совместного конструирования импликатуры вежливости в рамках прагматического и лингвистического потенциала и провести лингвопрагматический сравнительный анализ в указанных контекстах.

**Новизна** данного исследования обусловлена тем, что впервые посредством аналитического сравнительного исследования была предпринята попытка изучить и проанализировать связь между вежливостью и импликатурой, особенности проявления импликатуры вежливости, ее типы, сущность формирования совместного конструирования импликатуры вежливости в официальных и неофициальных интервью.

**Теоретическая значимость** данной работы заключается в том, что результаты исследования могут быть использованы в исследованиях по прагматике, лингвистике, социологии.

**Практическая значимость** заключается в том, что результаты исследования могут быть представлены на семинарах по лингвистике, в курсах грамматики и лексикологии.

## VARDITER HAKOBYAN

### LINGUOPRAGMATIC PECULIARITIES OF FORMAL AND INFORMAL INTERVIEWS IN THE 21<sup>ST</sup> CENTURY AMERICAN PRESS.

#### SUMMARY

Linguistic context commonly contributes to meaning determining the choice of linguistic means, pragmatic peculiarities, clearly identifying implied meanings of utterances.

The **object** of this research is the linguopragmatic peculiarities of formal and informal interviews in the 21<sup>st</sup> century American press.

The study is devoted to one of the key concepts in pragmatics – politeness implicature, as well as its types, co-constitution of politeness implicature, peculiarities of manifestation in formal and informal interviews in the light of linguopragmatics. In the research, we have analyzed interviews with the participation of forty-fourth US president Barack Obama whose speeches are well-supplied with expressiveness and wide use of linguistic means.

The research studies comprehensively embrace the manifestation of linguopragmatic peculiarities (formal context, informal context, pragmatic peculiarities of linguistic means, a high degree of politeness, indirectness, minimizing imposition, formal relationships, social distance between the interviewer and interviewee, close relationships, direct verbal manifestations, etc) of politeness implicature, its types */enhancement politeness, compensatory politeness, demeanour politeness, provisional politeness, negative politeness/* (Leech, 1983; Brown and Levinson, 1987; Leech, 1983; Haugh, 2005) and the co-constitution of politeness implicature in formal and informal interviews.

The **aim** of the research is to comprehensively reveal the peculiarities of manifestation of politeness implicature, its types and co-constitution of politeness implicature in formal and informal interviews from the position of linguopragmatics.

To achieve the goal of the research, the following **objectives** have been set forward:

1. investigate the essence of an interview, its types, pragmatic peculiarities (types of questions, the role and status of the interviewer, thanking, solemnity of the interview, etc.),
2. implement pragmatic and linguopragmatic investigation, study the essence of implicature as a pragmatic concept, its intersection with politeness implicature, the manifestation of politeness implicature (utterances, linguistic means), as well as analyze the principles to politeness approaches (formal context, high degree of politeness, social distance, imposition minimization, etc.),
3. reveal the characteristics of manifestation of politeness implicature, its types and the co-constitutive nature of politeness implicature.,
4. analytically compare peculiarities of manifestation of politeness implicature, its types, the co-constitution of politeness implicature within the pragmatic and linguistic potential and implement linguopragmatic comparative analysis in the above mentioned contexts.

The **novelty** of the research consists in the fact that for the first time, through analytical comparative research, an attempt is made to examine and analyze the intersection between “politeness” and “implicature”, peculiarities of manifestation of politeness implicature, its types and the co-constitutive nature of politeness implicature in formal and informal interviews.

The **theoretical value** of the research is provided by the fact that its findings can be employed in the studies of pragmatics, linguopragmatics, sociology.

The **practical significance** of the research is maintained by the fact that its findings can make a certain contribution to linguopragmatic seminars, courses dedicated to grammar and lexicology.

A handwritten signature in black ink, appearing to be 'M. A. A.', located in the bottom right corner of the page.